Ստեփանավան համայնք

Թիվ 1 մսուր – մանկապարտեզ

ՀՈԱԿ

Հաշվետվություն 2024թ.

Հաշվետվություն

Նախադպրոցական հաստատության կառավարումը ղեկավարի նպատակաուղղված գործունեությունն է՝ուղղված հաստատության զարգացմանն ու դրա համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

Մանկապարտեզի տնօրենի հիմնական գործառույթներն են՝մանկավարժական գործունեության պլանավորումը,կազմակերպում,կարգավորում և վերլուծություն:

Մանկապարտեզի ղեկավարումն իրականացվում է համայնքապետարանի տրամադրած կանոնադրության և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Իրականացվում է նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրություն և իրացման աշխատանքները:

Հաստատությունում պահպանվում է կատարողական և ֆինանսական կարգապահություն:

Սահմանված կարգով աշխատողների միջև բաշխված են պաշտոնեական պարտականությունները:

Ապահովվում է ծախսային միջոցների նպատակային օգտագործումը:

Առկա են հաստատության տարեկան գույքագրման և նյութական արժեքների տվյալները:

Առկա են պայմանագրեր՝ ծնողների,աշխատակիցների հետ:

.Աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների պահպանումը:

.Հակահրդեհային անվտանգության կանոնների պահպանումը հաստատությունում:

.Սանիտարահիգիենիկ վիճակի կարգավորում և կատարում:

Ստեղծված են պայմաններ սննդի կազմակերպման և բուժսպասարկման համար:

.Հաստատությունում մշակվում են կրթօջախի գործարկման և զարգացման ռազմավարություն և տակտիկա:

.Կիրառվում են կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման արդիական ձևեր:

Անցկացվում են տարաբնույթ ձևերի պարապմունքներ/անհատական,խմբակային,ենթախմբերով/:

Կազմակերպվում են համատեղ միջոցառումներ՝ սաների,մանկավարժների,և ծնողների մասնակցությամբ:

Երեխաների համար ստեղծված է ազատ տարածքներ,որպեսզի կարողանան ակտիվ լինել և բազմակողմանի արձագանքել շրջապատին:

Առկա են զարգացմանը համապատասխանող ուսումնական ծրագրին անհրաժեշտ հիմնական նյութերը և գրականություն:

2024թ-ին կատարվել են բոլոր ծրագրային միջոցառումները:

.Ընդհանուր խմբերն ընդգրկելով կայացել են հետեվյալ միջոցառումները՝ բանակի օր/հունվարի 28/,զատիկ:

.Մանկապարտեզը գտնվում է համայնքապետարանի ենթակայության տակ և այդ պատճառով միշտ գտնվում է համայնքապետարանի ուշադրության կենտրոնում:
Կազմակերպվում են սննդի,տնտեսական և գրենական

ապրանքների մատակարարում ժամանակին նախատեսված գրաֆիկով:

Համայնքապետի ուշադրության կենտրոնում են թե մանկապարտեզի աշխատակիցները,թե հաստատություն հաճախող երեխաներըև կազմակերպվող բոլոր աշխատանքները:

Այս տարի հաճելի անակնկալ ստացանք համայնքապետի կողմից կանանց միջազգային օրվա կապակցությանբ, և երեխաները՝ հունիսի 1-ի կապակցությամբ:

2024թ-ին հաստատությունը համայնքապետարանի շնորհիվ ձեռք բերեց նոր անկողնային պարագաներ և սպասք երեխաների համար:Մեթոդական անկյունը համալրվեց նոր խաղերով:

Ավարտական երեխաները հանդիպում ունեցան համայնքապետի հետ՝մանկապարտեզն ավարտելու կապակցությամբ,նկարվեցին,որպես հուշ և ստացան նվերներ:

Տարվա ընթացքում համայքապետարանի կողմից կատարվել են վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ՝ մանկապարտեզի ներսում և բակում:

Հուլիս ամսին կայացավ տարվա հաշվետու միջոցառումներ:Ավագ խմբի երեխաները ստացան ավարտական վկայականներ մանկապարտեզի և գրենական պիտույքներ համայնքապետարանի կողմից: Օգոստոս ամսին ավագ խմբի երեխաները ազատվեցին մանկապարտեզից՝դպրոց հաճախելու կապակցությամբ: Սեպտեմբերի 1-ից համալրվեցին խմբերը և սկսվեց նոր երեխաների ընդունելություն:

.Օգոստոսի 20-ին կայացավ առաջին մանկավարժական խորհրդի նիստը՝տնօրենի,մեթոդիստի և դաստիարակների և բուժքույրի մասնակցությամբ: Հաստատվեցին նոր ուսումնական տարվա դասացուցակները,երեխաների օրվա ռեժիմը:Տրվեց հստակ ցուցումներ երեխաների գիտելիքները բարելավելու և օրը հագեցած դարձնելու համար:Մանկ. Խորհուրդից հետո կազմակերպվեցին ծնողական հանդիպումներ դաստիարակների հետ:Ծնողները ծանոթացան նոր դաստիարակների հետ և տեղեկացան ամսավճարների,երեխաների օրվա ռեժիմին,կայանալիք աշխատանքներին:Մանկապարտեզը միշտ կապ է պահում ծնողների հետ և փորձում ներգրավել միջոցառումներին:
.Սեպտեմբերի 15-ից մանկապարտեզում սկսվում են երեխաների պարապմունքները ըստ տարիքային խմբերի՝պետական կրթական և չափորոշչին համապատասխան ծրագրերով:

.Սեպտեմբերի 10-ին կայացել է ծնողական ընդհանուր ժողով 80 ծնողի մասնակցությամբ: Դաստիարակները ներկայացրել են իրենց պարտականություններն ըստ տարիքային խմբերի:

Հոկտեմբերին մանկապարտեզի կողմից կազմակերպվել է էքսկուրսիա բնության գրկում ավագ խմբում,որպես աշնան դիտում:

Հոկտեմբերին կայացել է մանկապարտեզի հանդեսներ <<Աշուն>>խորագրով տարիքային բոլոր խմբերում: Ծնողներին ներկայացվեց երեխաների տրված գիտելիքների մի փոքր մաս:

.Նոյեմերին մանկապարտեզում հայտարարվել է բաց դռների օր ծնողների համար,բոլոր խմբերում: Ծնողներին ներկայացվել է

Երեխաների կատարած աշխատանքները՝ ըստ չափորոշչին համապատասխան դասացուցակային պարապունքների:

Դեկտեմբերի 13-ին անակնկալ խրախուսվեցին ՀՈԱԿ-ի բոլոր աշխատակիցները համայնքապետ՝ Ա. Գրիգորյանի կողմից, որպես ամանորյա նվեր:

Դեկտեմբերի 27-ին կայացավ միջոցառում տարիքային բոլոր խմբերում <<Ձմեռ>> խորագրով և որպես տարվա ամփոփում երեխաներին նվերներ հանձնվեց համայնքապետ Ա. Գրիգորյանի կողմի:

2024թ-ը ամփոփում ենք նոր գիտելիքներով և ձեռքբերումներով:

Շնորհակալություն համայնքապետ Ա. Գրիգորյանին և համայնքապետարանի աշխատակազմին միշտ աջակից լինելու համար:

ՀՐԱՖԵՏՏ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ
2023
6

ՀՐԱՖԵՏՏ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ



ՀՐԱԺԵՇՏ ՄԱՆԿՊԱՐՏԵԶԻՆ
2023
2024

ԽԱՂՈՂ
ՏԱՆՁ
PEAR

ՀԱՎԵՐԺ ՓԱՌՔ
ՀԱՅ
ՀԵՐՈՍՆԵՐԻՆ